Հավելված N 498
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարար միջավայրի վարչության (այսուհետ՝ Վարչություն) գործարար միջավայրի բարելավման բաժնի (այսուհետ՝ բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.21-Մ2-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման և դիտանցման և դրանց հետ կապված միջոցառումների համակարգման աշխատանքները.
2. Իրականացնում է գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտման հետ կապված աշխատանքները,
3. Իրականացնում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումների տրամադրման աշխատանքները,
4. Իրականացնում է գործարար միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» հետ կապված աշխատանքները.
5. Իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներ.
6. Իրականացնում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ աշխատանքներ.
7. մասնակցում է գործարար ոլորտին առնչվող քննարկումներին և այլ միջոցառումներին.
8. Իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները.

9. Իրականացնում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի մշակումը, փաստաթղթերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի նախապատրաստումը:

Իրավունքները՝

• Ստանալ համապատասխան մարմիններից ներկայացված անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ-ում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման վերաբերյալ,

• Ստանալ գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը,

• Ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ գործարար միջավայրի տարբեր ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ,

• Ստանալ համապատասխան մարմիններից ստացված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման ուղղությամբ,

• ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համար,

• Ստանալ համապատասխան մարմիններից ներկայացված հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը և նյութերը,

• Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատմումն իրականացնելու համար:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել և մշակել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության հետ կապված աշխատանքները,

• ուսումնասիրել ՀՀ-ում գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտման և դրանց վերացման առաջարկությունների ներկայացմանն ուղղված աշխատանքները,

• ուսումնասիրել գործարար համայնքի հետ հետադարձ կապի կազմակերպման աշխատանքները, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ծանուցումները, ինչպես նաև բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումները գործարար համայնքի հետ,

• վերլուծել և ամփոփել ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների «Թեժ գծի» հետ կապված աշխատանքներից ստացված արդյունքները,

▪ ուսումնասիրել համապատասխան մարմիններից ներկայացված ամբողջական տեղեկատվությունը և նյութերը հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների վերաբերյալ,

• ուսումնասիրել համապատասխան մարմիններից ստացված ամբողջական փաթեթը

մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության օրենսդրական և վարչարարական ընթացակարգերի վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ,

• Ներկայացնել առաջարկություններ համապատասխան մարմինների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ մասնագիտական քննարկումներին,

• ուսումնասիրել անհրաժեշտ տեղեկատվությունը նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝ գործարար միջավայրի ոլորտում խորացված կարգավորման ազդեցության գնահատումն իրականացնելու համար,

• նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեություն որոշակի ոլորտին վերաբերող

համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: